ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» մարտի 2015 թվական N 40–Ա

«ԳՅՈՒՄՐԻՆ ՄԵՐ ՏՈՒՆՆ Է» ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՍԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սկսած 2014 թվականից «Գյումրին մեր տունն է» քաղաքացիական նախաձեռնության (այսուհետ՝ «Նախաձեռնություն») անդամների ջանքերի շնորհիվ Գյումրիի Անի թաղամասում կառուցվում է հեծանվային էքստրեմալ վազքուղի: Նախաձեռնության անդամները մտադրվել են այդ սպորտաձևը արմատավորել և զարգացնել Գյումրիում: Այդ կապակցությամբ անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել հատուկ այդ նպատակով ստեղծված հեծանիվ, ինչը ձեռք բերելու համար դրամական միջոցներ հատկացնելու խնդրանքով Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել Նախաձեռնության անդամ Արսեն Վարդանյանը: Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Նախաձեռնության անդամ Արսեն Վարդանյանի գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի մարտի 20-ին N3052 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. «Գյումրին մեր տունն է» քաղաքացիական նախաձեռնության անդամ Արսեն Սամսոնի Վարդանյանին հեծանիվ ձեռք բերելու նպատակով հատկացնել 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Պարտավորեցնել Արսեն Սամսոնի Վարդանյանին՝ ներկայացնելու սույն որոշման 1-ին կետում նշված գումարի ծախսերի վերաբերյալ հաշվետվություն:
3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Կողմ (15)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան _____		
Գ. Ադամյան _____		
Ա. Բաղրամյան _____		
Մ. Գաբոյան _____		
Ա.Գրիգորյան _____		

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«25» մարտի 2015 թ.